ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **13/06/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Արուսյակ Ավետիսյանը, Հայկ Երանոսյանը, Ռաֆայել Խչեյանը, Արաքսյա Հայրապետյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Սաթենիկ Մինասյանը, Մուշեղ Շաբոյանը, Սեվակ Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԸ ԸՆԴԱՆՈՒՐ 363.3 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի տնօրեն՝ Արեն Դեյիրմենջյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 05-005-0087-0011, սեփականության իրավունքի վկայական՝ 20092023-05-0070) Վարդենիս քաղաքի Խ. Ստեփանյան փողոց 15/1 հասցեի (երաժշտական դպրոց) անշարժ գույքի առաջին հարկը՝ ընդանուր 363.3 քմ մակերեսով, անհատույց օգտագործման իրավունքով՝ 5 (հինգը) տարի ժամկետով, տրամադրել Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությանը՝ Վարդենիս քաղաքում մինչև 60 երեխայի համար մանկական զարգացման և ցերեկային խնամքի կենտրոններ ստեղծելու նպատակով, որի համար կենտրոնում նախատեսվում է ունենալ մինչև 20 աշխատակից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց թույլատրել Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 05-005-0087-0011, սեփականության իրավունքի վկայական՝ 20092023-05-0070) Վարդենիս քաղաքի Խ. Ստեփանյան փողոց 15/1 հասցեի (երաժշտական դպրոց) անշարժ գույքի առաջին հարկը՝ ընդանուր 363.3 քմ մակերեսով, անհատույց օգտագործման իրավունքով՝ 5 (հինգը) տարի ժամկետով, տրամադրել Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությանը՝ Վարդենիս քաղաքում մինչև 60 երեխայի համար մանկական զարգացման և ցերեկային խնամքի կենտրոններ ստեղծելու նպատակով, որի համար կենտրոնում նախատեսվում է ունենալ մինչև 20 աշխատակից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կազմակերպությունը `ըստ պայմանավորվածքության նախատեսում է վերանորոգել շեբքի տանիքը, վերանորոգել առաջին հարկը և հետագայում նաև երկրորդ հարկը: Նշեց նաև որ ծավալվող գործունեությունը ոչ մի կրոնական ուղղվածություն չունի:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը, նշեց, որ խոսել է Տեր Հարություն քահանա Հունանյանի հետ իմանալու համար արդյոք տեղեկություն ունի, ծանո՞թ է, ուսումնասիրե՞լ է, ինչ են անելու: Նշեց, որ առաջին մասը համայնքի համար կարևոր, զարգացնող, շահեկան գործունեություն են ծավալելու շատ ողջունելի է: Նաիրա Մանուչարյանը նշեց, որ Տեր Հարությունը ծանոթ չէ և վստահ չէ, որ մանուկների հոգեկերտվածքին չեն վնասելու: Նաիրա Մանուչարյանը առաջարկեց հարցը տեղափոխել մինչև Վարդենիսի տարածաշրջանի հոգևոր հովիվն ուսումնասիրի և կողմնորոշի:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կա պայմանավորվածություն և չի կարող հետաձգել հարցի քննարկումը, հարցի վերաբերյալ քննարկում եղել է տարբեր անձանց հետ և հարցը որևէ կրոնական ուղղվաշություն չունի:

Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն:

Քվեարկության արդյունքում 11 կողմ, 0 դեմ, 7 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 97-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԳԵՂԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Խաչաղբյուր և Գեղաքար բնակավայրերն իրար միացնող մարզային նշանակության կամուրջի հիմնանորոգման աշխատանքների նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և դրանց փորձաքննության եզրակացության ձեռք բերման համար համայքի բյուջեից 1.6. 1 գործառնական դասակարգման 5113 հոդվածից հատկացնել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեյկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի Խաչաղբյուր և Գեղաքար բնակավայրերն իրար միացող կամուրջը ունի մարզային նշանակություն: Կամուրջը գտնվում է անբարեկարգ վիճակում, մարզպետի հետ ունեցած հանդիպում-քննարկման արդյունքում ներկայացրել եմ կամուրջի անբարեկարգ վիճակի մասին և որոշեցինք, որ կամուրջի նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և դրանց փորձաքննության եզրակացության ձեռք բերման ֆինանսավորումը իրականացվելու է համայքի կողմից, իսկ շինարարական աշխատանքների ֆինանսավորում կիրականացվի մարզպետարանի կողմից:

Առաջարկեց հաստատել Վարդենիս համայնքի Խաչաղբյուր և Գեղաքար բնակավայրերը իրար միացող մարզային նշանակություն կամուրջի նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և դրանց փորձաքննության եզրակացության ձեռք բերման համար և հատկացնել 300.000 (երեք հայուր հազար) ՀՀ դրամ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 96-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացում, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության 23 մայիսի 2024 թվականի N 757-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի № ԱՎ/26.2/18807-2025 թվականի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի 2025 թվականի մասհանումների ծախսման ծրագրով նախատեսվում է իրականացնել Վարդենիս համայքի Կութ բնակավայրի խմելու ջրամբարի հիմնանորոգում, Ազատ բնակավայրի 200գծմ ոռոգման ցանցի կառուցում, Այրք բնակավայրում լուսավորության ցանցի անցկացում և համայնքի բնակավայրերի կարիքների համար ավտոաշտարակի ձեռքբերում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում քննարկվել է Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի լրամշակված ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), տրվել է նախնական հավանություն և առաջարկվել է Ծրագիրը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը, ուստի առաջարկում եմ հաստատել Վարդենիս համայնքի 2025 թվականի մասհանումներ ծախսման ծրագիրը՝ համաձայն հավելվածների, որոնք կցված են:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 95-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի ու «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի գրությունները և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցը նախագծով նախատեսված վիճակի հասցնելու մասին՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ համաձայնություն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից փոխարինված խողովակների հետևանքով՝ Վ. Համբարձումյան փողոցի խրամուղու վերականգնման աշխատանքները իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի փոսալցման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական հոդվածից հատկացնել՝ 20. 350.000 ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ 2023 թվականի նպատակային սուբվենցիոն ծրագրերի շրջանակում նախատեսված է Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների իրականացումը: 2023 թվականի օգոստոսի 1-ին, շինարարական աշխատանքների կազմակերպման նպատակով, «ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր և համաձայնագիր:

Սակայն, որոշ ժամանակ անց, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա, ասֆալտապատման աշխատանքները դադարեցվել են՝ Վ. Համբարձումյան փողոցում ջրագծերի կառուցման աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ: Այժմ, երբ նշված աշխատանքներն ավարտվել են, շինարարական կազմակերպությունը կարող է վերսկսել ասֆալտապատման գործընթացը:

«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2022 թվականին կազմված նախագծով նախատեսված շինարարական շերտերը՝ առկա ծածկի ֆրեզավորում, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում (50%) և 5 սմ մանրահատիկ ասֆալտբետոն, չեն կարող կիրառվել տվյալ պահի իրական պայմաններում:

Մասնավորապես՝ ջրագծերի կառուցման հատվածներում գրունտը փափուկ է, իսկ մնացած հատվածներում՝ ֆրեզավորումից հետո հնարավոր չէ ապահովել փոսային նորոգման պատշաճ իրականացում: Հաշվի առնելով վերոնշյալը՝ շինարարական կազմակերպությունն առաջարկել է վերանայել նախագծային լուծումները:

«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ-ի գրությունը Վարդենիսի համայնքապետարանը փոխանցել է նախագծող «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին, որը իրականացրել է անհրաժեշտ լրացուցիչ ուսումնասիրություններ և ներկայացրել մասնագիտական եզրակացություն: Եզրակացության համաձայն՝ 2022 թվականին կազմված նախագիծը ներկա փուլում չի կարող իրագործվել, քանի որ այն չի համապատասխանում տարածքի ներկայիս տեխնիկական վիճակին:

Անհրաժեշտ է փոսային աշխատանքները վերացնելու նպատակով հայտարարել գնանշման հարցման մրցույթ՝ կատարելով վեր նշված աշխատանքները և թերությունները վերացնելուց հետո թույլ տալ «Կապավոր» ՍՊԸ-ին իրականացնել պայմանագրով նախատեսված ասֆալտապատման աշխատանքները: Վ. Համբարձումյան փողոցի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար առաջարկում եմ թույլ տալ 20.350.000/քսան միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի հատկացումը՝ համաձայն նախահաշվի:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ

հոդվածներիի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր տեսակի հողերի օտարումների համար, լիցենզավորված կազմակերպության միջոցով հողերի գնահատման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունից ելնելով՝ համայնքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն քննարկելու և հաստատելու մասին>> 24 հունվարի 2025 թվականի N 3-Ն որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)<<Վարդենիս համայնքի վարչական բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 4000.0 հազ ՀՀ դրամ՝ այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4241 տնտեսագիտական հոդվածին>>:

2)Վարդենիս համայնքի դպրոցների շրջանավարտներին վերջին զանգի արարողակարգի կապակցությամբ ավագանու կողմից հատկացված դրամաշնորհների վճարման նպատակով, թույլատրել համայնքի ղեկավարին <<Վարդենիս համայնքի վարչական բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 4657 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 2000.0 հազ ՀՀ դրամ՝ այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածին>>:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարն առաջարկեց Վարդենիս համայնքի ավագանու 24 հունվարի 2025 թվականի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն քննարկելու և հաստատելու մասին>> N 3-Ն որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)<<Վարդենիս համայնքի վարչական բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 4000.0 հազ ՀՀ դրամ՝ այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4241 տնտեսագիտական հոդվածին>>:

2)Վարդենիս համայնքի դպրոցների շրջանավարտներին վերջին զանգի արարողակարգի կապակցությամբ ավագանու կողմից հատկացված դրամաշնորհների վճարման նպատակով, թույլատրել համայնքի ղեկավարին <<Վարդենիս համայնքի վարչական բյուջեի 1.6.1 գործառնական դասակարգման 4657 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 2000.0 հազ ՀՀ դրամ՝ այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածին>>:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել 2025 թվականի հունիսի 13-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 5 հարցից.

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԳԵՂԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԸ ԸՆԴԱՆՈՒՐ 363.3 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2025թ. հունիսի 13-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 18-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին Հայկ Երանոսյանը, Ռաֆայել Խչեյանը, Սևակ Սիմոնյանը, Մուշեղ Շաբոյանը <<Միասնական

Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Արաքսյա Հայրապետյանը, <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամներ՝ Սաթենիկ Մինասյանը, Արուսյակ Ավետիսյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության, բաղկացած 5 հարցից.

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԳԵՂԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 15/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԸ ԸՆԴԱՆՈՒՐ 363.3 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

18 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ՆԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՋԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____